ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 21-24-ը Ղրղզական Հանրապետության (ք. Չոլփոն-Աթա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզական Հանրապետություն (ք. Չոլփոն-Աթա) 21.06.2017թ.-24.06.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր Հակամենաշնորհային կարգավորման պետական գործակալություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել է 2017 թվականի հունիսի 21-24-ը Ղրղզական Հանրապետության Չոլփոն-Աթա քաղաքում կայանալիք սպառողների շահերի պաշտպանության հարցերով Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամ-երկրների Խորհրդատվական խորհրդի և Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ ՀՔՄԽ) համատեղ երկրորդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել է ԱՊՀ անդամ-երկրների շուկաներ անորակ ապրանքների ներմուծումը կանխելու և դրա մասին նախազգուշացնելու նպատակով՝ ԱՊՀ ճյուղային մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ գործողությունների համակարգման հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- ԱՊՀ շրջանակներում անցկացված հիմնական միջոցառումները և անդամ-երկրների սոցիալ տնտեսական վիճակը,

- Անչափահասների և սոցիալապես անապահով խավի սպառողական իրավունքների և շահերի պաշտպանություն,
- Սպառողների իրավունքների պաշտպանության Խորհրդատվական խորհրդի 2017-2018թթ աշխատանքային ծրագրերի նախագծեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում որոշվել է ԱՊՀ մասնակից երկրների 2018 թ.-ի կայանալիք նիստի ժամանակ քննարկել սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ հարցերը տարբեր բնագավառներում, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների ոլորտում:

Նախանշվել և ընդունվել է պարբերաբար ԵԱՏՄ անդամ երկրների միջև փոխանակվել տեղեկատվությամբ՝ տեսչական մարմինների կողմից գործառույթների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ և նրանց կանխարգելման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Գործուղման շրջանակներում պարզաբանվեցին սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ առաջիկա խորհրդակցության ժամանակ քննարկել 2018թ-ին ԱՊՀ անդամ երկրների կողմից սպառողների իրավունքների պաշտպանության կարգավորման նպատակով նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման հարցը: Գործուղման վերջին օրը պարգևատրվել եմ պատվոգրով՝ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ցուցաբերած ակտիվ գործունեության համար:

10. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

28.06.2017 թ.